

**Պատասխաններ և գնահատման չափանիշներ**  
**հայոց լեզվի օլիմպիադայի հանրապետական փուլի**  
**12-րդ դասարան**

**Պատասխաններ**

1. ... ի վերջո դադարում է անկեղծ լինել ինքն իր հետ: ... նրան ազնվության մեջ կասկածելն է:
3. **որկոր**-2.փխբ. **փոր**, **ստամոքս**, 1. կերակրափող, խոչակ, 3. ուտելու ցանկություն՝ ախորժակ, **նկրտում**-բաղձանք, տենչ, ձգտում(առավելապես բացասական իմաստով)  
**պատեհապաշտ**- **շահամոլ**, դիրքի՝ պաշտոնի հասնելու համար ընդհանուր գործի շահերն անտեսող և հարմարվողականությամբ առաջնորդվող մարդ,  
**փարիսեցի**- 2.փխբ. **երկերեսանի**, **կեղծավոր**, **շողոքորթ** 1.Հին Հուն-ում ունևոր խավի շահերը պաշտպանող և բարեպաշտության կանոնները երկերեսանիորեն կատարելով բնութագրվող կուսակցության անդամ,  
**այպանել** -1.ծաղրել, 2.նախատել  
**անձեռակերտ**- 2. փխբ.**սքանչելի**, **հրաշակերտ**, 1.ձեռքով չշինված, ոչ արհեստական, բնական **անկապտելի**- **անհերքելի**, **հաստատուն**, անկողոպտելի, աներկբայելի,  
**անխառն**- 2.**պարզ**,**անկեղծ**, 1. չխառնված, խառնուրդ չունեցող, 3.մաքուր, անարատ  
**քանքարավոր**- **տաղանդավոր**, **մեծատաղանդ**, **հանճարեղ**, **ձիրքաշատ**  
**հացկատակ**- շողոքորթ, երկերեսանի, պնակալեզ, մեկի բարեհաճությանը արժանանալու համար նրան ստրկամտորեն շողոքորթող
4. ասել, հուսալ, բանալ, առնել, եմ, գիտեմ, լինել, թողնել, դնել, դառնալ
5. **սակայն**- համադաս. շաղկապ/ զիջական վեր.  
**մեկ**-տեղի կապ / բացարձակ թվական,  
**որ**- ստորադաս. շաղկապ/հար. դերանուն,  
**անգամ**- սաստկական վեր./չափի կապ/ածական (առանց գամի),  
**այդուհանդերձ**- զիջման և հակասման ստորադաս.շաղկապ/ զիջական վեր.
6. Այդուհանդերձ պատեհապաշտ փարիսեցիներն առիթը բաց չեն թողնում՝ գործի դնելու արդարությունը՝ որպես դիմակ, որ/ որպեսզի/ դատապարտեն, այպանեն նույնիսկ անմեղսունակներին: Բնույթը՝ նպատակի պարագա:
7. **ծառանալ**-1.հետևի ոտքերի վրա կանգնել, ծառս լինել(ձիու մասին),2.վեր ձգվել, խոյանալ, բարձրանալ, 3. փխբ. ըմբոստանալ, ընդվզել, 4. փխբ. ուժգնանալ,մոլեգնել(ալիքները), 5.փխբ.առաջանալ, ծագել, երևան գալ,6.դեմ կանգնել, դիմադրել, 7. փխբ. փոթորկվել
8. **առ**- առաջին, առձեռն, առափնյա / հոգեառ, առևտուր, փորձառու, շնչառություն և այլն,  
**ամենա** – ամենազոր, ամենավատ / ամենակուլ, ամենագնաց, ամենահաղթ և այլն  
**հակ**-հակադիր, հակընդդեմ, հակադարձ / ներհակ, հակում, հակվածություն և այլն  
**վեր**-վերադարձ, վերսկսել,վերհաս/ վերին, վերև, վերոհիշյալ և այլն  
**տար**- տարընթաց, տարակույս, տարակարգ /բեռնատար, տարուբերել, հոգատար և այլն  
**հար**-հարադիր,հարաբերվել, հարակից/ հարիչ,հարել,հարված, կայծակնահար և այլն  
**փոխ**- փոխարքա, փոխանցում, փոխակերպել/ փոխարեն, փոփոխել, փոխնիփոխ և այլն  
**բաց**- բացահայտ, բացականչել, բացարկ,բացասել/ նորաբաց, բացատ, բացվածք և այլն  
**շար**-շարադրանք, շարահյուսություն,/ երգաշար, սյունաշար, շարք  
**ստոր**-ստորակետ, ստորադասել, ստորաքարշ/ ստորին, ստորություն
- 9.Մարդուն մարմնական սնունդից բացի հոգեկան սնունդ (աստվածային խոսք) է անհրաժեշտ: Ըստ Աստվածաշնչի: Աստծո Որդու խոսքերն են՝ ուղղված սատանային, որն առաջարկեց քարերը հաց դարձնել:  
Դեպի ու՞ր ես քայլում, ի՞նչ ուղի ես ընտրել կյանքում: Ըստ Աստվածաշնչի՝ Պետրոսը հարցնում է Տիրոջը, թե ուր է գնում:Պատասխան՝ Ուր գնում եմ, դու գալ չես կարող, բայց հետո իմ հետևից կգաս: Ինչպես նաև հայտնի է ըստ Հ. Մենկևիչի՝ նույնանուն պատմավեպի:

## Գնահատման չափանիշներ

2. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավոր:
3. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,2 միավոր:
4. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,1 միավոր:
5. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,1 միավոր:
6. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,25 միավոր:
7. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,5 միավոր:
8. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,1 միավոր:
9. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0, 25 միավոր:

Բոլոր առաջադրանքների ուղղագրական յուրաքանչյուր սխալի համար հանվում է 1, կետադրականի համար 0,5, քերականական, ոճական և տողադարձի սխալներից յուրաքանչյուրի համար 0,25 միավոր: